

դատախոսութիւններէ ընթացքում պէտք է առանձնապէս շեշտուի:

Դ) ԿՈՂՄՆԱԿԻ ԳԱՍՏՆԹԱՅՆԵՐԻ ՎԵՐՈՋԻՆԵՐԻ ծրագիրն ամփոփում է թէ ուսանողներէ և թէ ուսուցիչներէ դասընթացքի մասերը: Բայց որովհետեւ կարող է լինել որ մի քանի ուսանողներ ցանկութիւն ունենան մի կամ մի քանի ուսման առարկաների մէջ վարժուելու, որոնք թէպէտ մանկավարժութեան չեն վերաբերում, բայց արժէք ունին մանկավարժի համար: Ուստի պատրաստութիւն է տեսնուած, որ ուսանողները մի փոքրիկ վճարով կարողանան օգտուել և կողմնակի դասընթացներից: Այդ դասընթացների մէջ են ֆրանսերէնի աբստանութիւնը, մարմնամարզութիւն, քարտէս նկարել և ըն:

Այս դասընթացներին մասնակցել ցանկացողները նախապէս պիտի խորհուրդ հարցնեն ուսուցչանոցի տեսչից:

Ահա այն գործնական ծրագիրը, որով պիտի սկսուի այս տարի Լոնդոնի ուսուցչանոցը. հարկաւ սա մի կատարելատիպ չէ այդ օրինակ դպրոցների համար, բայց ունի այն մեծ առաւելութիւնը, որ մանկավարժութեան սէր ու շնորհք ունեցողներին ամէն հնարաւորութիւն տալիս է տեսականապէս և գործնականապէս պատրաստուելու ուսուցչի պատասխանատու պաշտօնի համար: Անգիլացիք սիրում են փորձերով առաջնորդուել, ուստի և աներկբայ է, որ մի քանի տարուան փորձերից յետոյ այս հիմնարկութիւնը կը ստանայ իւր որոշ և հաստատուն տիպարը: Մենք համազուտ ենք, որ մեր միջնակարգ դպրոցների ուսուցիչներին համար ևս հնարաւոր է այսպիսի վարժութեան տարեշրջաններ ու դասընթացներ հիմնել, սակայն զբանից առաջ ամենակարեւոր խնդիրն այն է, որ մենք ուսուցչական դասակարգ ունենանք և մեր դպրոցները նախադուռն չը լինին անվարձ պաշտօնների և անպաշտօն վարձկանների համար:

Անդապ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ՝

Կանոնաւոր զարգացումն ունեցող զրահանութիւնները սնունդ են ստանում ժողովրդական զրահանութիւնից: Մեր այսօրուան նոր զրահանութիւնը զեռ չէ սկսել իւր կանոնաւոր զարգացման ընթացքը, նա էլ մեր հին զրահանութեան պէս մի մուրացածոյ և հետեող զրահանութիւն է և ոչ ինքնուրոյն: Սրա պատճառն է անշուշտ մեր ժողովրդական զրահանութեան աչքաթող արուած լինելը: Մինչդեռ աշխարհարար զրահանութիւնը հարկւրամեայ կամ աւելի մի շրջան է բոլորել արդէն, քառորդ դար չէ լրացրել զեռ այնօրուանից, երբ սկսել ենք ծանօթանալ մեր հարուստ ժողովրդական զրահանութեան:

Այս անփութութեան վնասներն արդէն կրում ենք, այսօր ամուլ է մեր նոր զրահանութիւնը, հետեող լինելու ոյժ չունենալով և մայրենի աղբիւրից ջուր առնել կարող չը լինելով, ցամաքել է մեր զուտ զրահանութիւնը:

Միայն այսքան չէ մեր վնասը, այլ աւելի մեծ է. չը ծանաչելով մեր ժողովրդական զրահանութիւնը, չենք ծանաչում և մեր ժողովուրդը ու չենք կարողանում օտարներին ծիղղ ծանաչեցնել: Մինչ հայն այսօր զուտ երկրագործ ժողովուրդ է, ամէնքը դուռմ են, որ նա վաշխառու է, ո՞վ դիտէ հայի գութանի երգերը, ո՞վ գիտէ հայ հովուի կեանքը:

Հայ հովուական կեանքի մի գեղեցիկ նկարագիրն է «Հութութիւն ու Սամէլ հովիկն», որ տպագրում ենք ահա «Արարտ»ի այս համարում: Ի՞նչ պարզ և գեղեցիկ հովուերգութիւն: Ի՞նչպէս գեղեցիկ և ժողովրդական է հովուի, հայ լեռնական հովուի կեանքը:

Կենկեօլի հրաշալիքը, լեռնային տեսարանի, բուսական աշխարհի և երգի ու սրնգի ձայների հրապոյրն ինչքան հոմերական պարզութեամբ է նկարագրուած: Հապա ի՞նչ ասենք սիրոյ տաշտանի նկարագրի մասին, սէրըն, այդ երկնային կրակի կայծը, որ վառուում է մարդու սրտում, ի՞նչքան վեհ, ի՞նչքան բոլուն և ի՞նչպէս յաղթահարիչ է:

Հուլիսի 1-ին սիրոյ տաղնապարհ ինչո՞ւ յայդ թաճ արգելքներն մեծութիւնը համոզում է մեզ, թէ ինչքան գնահատում է հայը այդ երկնային պարգեւը: Թող կարգան այս պարգ վէպիկն այն մարդիկ, որ հայի մէջ միայն նիւթականի սէրն են դանդաղ:

Այս գեղեցիկ ժողովրդական վէպիկը պատմել է Խարբերդի կողմից Խամայէլ զիւղից գաղթած Սինաս բարարը:

Այս ամառ երբ հետաքրքրութեամբ ուսումնասիրում էի Պ. Ս. Հայկունու գրական նախան ժողովածուն, իսկոյն աչքիս ընկաւ այս վէպիկն իւր նորաձեւութեամբ: Այդ մասին մի հարեանցի տեղեկութիւն տուի «Արձագանք» թերթին: «Արձագանք» այդ յօդուածը շարժել է մի հայ գրասէրի հետաքրքրութիւնը և նա նպաստ էր ուղարկել թէ Պ. Հայկունի շարադրութիւնների տպագրութեան և թէ Սինաս բարարի համար: Այդ այդ առատաձեռն հայի նուէրը տալու համար ութսունամեայ Սինաս բարարին կանչեցի, պէտք էր տեսնել նրա զարմանքը: Եւ ինչո՞ւ հայ, նա վարժուել էր արգէն, որ արհամարհանքով վերաբերուէն դէպի Հայ քաղը: Հայի լեզուն: Երգը. — Այժմ ամէնքը թուրքերէն խաղ կը կանչեն, հայի բառ չեն ուղեր, իմ տղայութեանս ժամանակ ուրիշ էր, հայերէն կը պատմէին, հայերէն կերգէին... երբ ես հայերէն կը պատմէի չէին լսեր, շատ բան մոռցեր եմ այժմ... Հառաչաձայն ընդհատմամբ զանգատուում էր Սինաս բարար: Օգուտ քաղելով առթիւ պատմել տուի կրկին «Հուլիսի»-ը և մի քանի նորութիւններ լսելուց յետոյ, խնդրեցի Պ. Հայկունուն կրկին դրի առնել, որ և կատարելով այդ խնդրին, ահա տպագրում է այն ձևով ինչ ձևով լսել է Սինաս բարարից: Սարգստիները կը նկատեն անշուշտ թերի մասերը, բայց դարձեալ ընդհանուր առմամբ սա մի ամբողջութիւն է, որ յանձնարարում ենք հայ գրագէտներին, թերեւս կարելի լինի մի աւելի լաւ վարիանտ գտնել:

Վէպիս լեզուն ևս աղաւաղ է, որովհետեւ պատմողն երկար օտարութեան մէջ մընալով խառնել է իւր լեզուն:

Այսին վէպիկների լեզուն թէպէտ և տաղաչափական է լինում սովորաբար ինչպէս օրինակ բոլոր քրդական վէպերի լեզուն է, բայց մեր պատմողն հազիւ միայն տեղ տեղ ճիշդ լեզուն և չափը պահած լինի Պ. Հայկունին կարծ տողերով է դրի առել, հետեւելով պատմողի ընդհատումներին:

Ս. Բ.

Հ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ի Կ

Ե Ի

Ս Ա Մ Է Լ Հ Ո Վ Ի Կ

Լ.

Սալաթիա ծերունի մարդ մը կըլլի, էաս մարդը շատ աղքատ, տուչիւն կըլլի, Իրեք հատ աղջիկ կունենայ, Մէ հատ էալ թօփալ օխշար (այծ) կունենայ, Աղքատը կերթըր փէատ կը բերէր, Քաղաք տանէր կը ծախէր, Հաց կը գնէր, տուն կը տանէր, Աղջկներուն կուտեցնէր, — Որդի, բարք մէկ օր, Դուք իրեք հատ աղջիկ էք, Մէկ թօփալ օխշար ունիք, Էլլէրին (այլոց) սիրելն լեառը կարծուի, Զեր էաս թօփալ օխշարը փոխուէն չէլլր, Էրկու մեծ աղջկներ պատկերուն լսին, — Բարար, մենք դէրտ չունինք, Բու թօփալ օխշարը տի տանինք, արծինք, Մենք ալ լսինք թէ, Զըհար բարարը մեզի ճիղմէ բան տի բերէ, Մարդը մէկ օր էալ օրթանձա աղջկան բարք, Էան էալ էան լմանը բարք, Մէկալ օրը չարէն կըյրաւ, Պղտիկ աղջկան բաւ, — Աղջիկս, քիզի բան տի լսիմ, — Ըսէ, բարար (հայր), — Որդի, տի լսիմ, Բըրըտոցդ պէս ալիքս անդեւս վախիմ, — Զէ, բարար, ես պղտիկ իմ, Բըրըտոցս պէս չիմ, Ինչ օր լսիս, քիզի մտիկ կինիմ, Ըսիս ջուրը ընկիր, կերթում կըյնիմ, — Որդի, օր թէ քըրըտոցդ պէս չիս, Օր իմ խօսքին մտիկ կինիս, Թօփալ օխշարը կը տանիս կարծիս, — Բարար, կերթիս ինծի մէ ջուխթ չարիս կառնիս, Բօլոզ մի, կաղնի լաւ դէյնէկ մի կըբերիս, Վրու մի լաւ քէէէ կը գտնես, Մի շատ լաւ խաւալ (սրինգ) կառնես, Բարարը էլաւ գնըք, Զարոխը, քոլօզը, դէյնէկը բերըք, Բէէէն էալ գտաւ, առաւ բերաւ, Աղջիկ չարիսը հագաւ, Բօլոզը գլօխը զարկաւ, Բէէէն էալ միան առաւ: